

## **Ազդարարման նպատակները**

1. Ազդարարման նպատակներն են՝

1) բացահայտել կոռուպցիոն բնույթի դեպքերը, շահերի բախման, էթիկայի կանոնների, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտումները, հանրային շահերին ուղղված այլ վնասները.

2) նվազեցնել և կանխարգելել կոռուպցիան.

3) նպաստել կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը:

### **«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 3:**

ՀՀ Կոտայքի մարզպետարանում, մարզպետարանի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններում և 100% պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերություններում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտմամ կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդման համար կարող եք դիմել ՀՀ Կոտայքի մարզպետարանի ազդարարման համար պատասխանատու անձ՝ Վահագն Նազլոյանին (ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ):

**Հեռախոս՝ 0223 2-32-70 Էլ. Փոստ՝ [andznakazmkotayk@gmail.com](mailto:andznakazmkotayk@gmail.com)**



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2018 թվականի N 149-Ա

### Վ. ՆԱԶԼՈՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշման N 1 հավելվածի 1-ին կետը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ **Վահագն Աշոտի Նազոյանին** նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ազդարարման համար պատասխանատու անձ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ազդարարման համար պատասխանատու անձին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշմամբ սահմանված լիազորությունների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2018 թվականի հունիսի 18  
ք. Հրազդան

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ